*Հավելված*

*Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի*
*ավագանու 10.02.2026թ. N 15 - Ա որոշման*

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ




# ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ

Մշակվել է՝ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2026թ.-ի փետրվարի 10-ի N 15-Ա որոշմամբ

**ԱՇՏԱՐԱԿ**
**2026թ.**

# ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն տեղական պլանով կանոնակարգվում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորումն ու մշտադիտարկումը և սահմանվում են աղբահանության և կոշտ թափոնների արդյունավետ կառավարման համար չափորոշիչները:

Աղբահանության կառավարման տեղական պլանի (այսուհետև՝ Պլան) մշակման նպատակն է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն և ինտեգրված արդյունավետ համակարգի ներդրման, միասնական քաղաքականության վարման, հանրապետության բոլոր համայնքներում աղբահանության ծառայության մատուցման կայուն որակի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմների ներդնումը: Այն նպատակ ունի ձևավորել համապարփակ մոտեցում աղբահանության կառավարման ոլորտում, համակարգել աղբահանության պլանավորումը տեղական ինքնակառավարման մարմիններում, ապահովել նպաստավոր պայմաններ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրման և թափոնների գործածության ամբողջական շղթայի գործարկման համար:

Պլանի մշակումը նպատակաուղղված է համայնքի և նրա բնակավայրերի աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգում ընդգրկմանը, աղբահանության ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների և ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մշտադիտարկման համակարգերի ներդրմանը:

Սույն պլանով նախատեսվում է տեղական մակարդակում՝ պլանավորել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կայուն կառավարման գործընթացը՝ համահունչ աղբահանության ռազմավարության գերակայություններին և ՀՀ և ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթներին (մինչև ընթացիք տարվա 3-րդ եռամսյակ մշակել թափոնների կառավարման պլաններ՝ թափոնների հինգ ստորակարգության մասով):

Պլանի մշակման նպատակն է Աշտարակ համայնքում ներդնել աղբահանության և կոշտ թափոնների կառավարման զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումը: Ընդ որում, Պլանը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը համահունչ և կիրառելի լինելով հանդերձ, պետք է սահմանի շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծման համատեքստում ընթացիկ և հեռանկարային թիրախներ՝ ներառելով թափոնների գործածության բոլոր բաղադրիչները:

Պլանը ներառվում է Աշտարակ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, այնպես էլ ամենամյա աշխատանքային պլանում: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար

պլանավորման գործընթացի արդյունավետությունը գնահատելու համար Պլանով սահմանված գործողությունների և թիրախների իրագործման արդյունքների գնահատում, ընթացիկ խնդիրների և խոչընդոտների վերլուծություն՝ մշտադիտարկում և հաշվետվողականություն, որը հնարավորություն կտա նախ բացահայտել ընթացիկ Պլանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև հաջորդ ժամանակահատվածի պլանավորումն իրականացնելու գերակայությունները և զարգացման ներուժը:

Աշտարակ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման ռազմավարական պլանը (ԱՍՌՊ) համայնքի մաքրության և բնության պահպանման, բնակչության հարմարավետության և առողջ ապրելակերպ վարելուն ուղղված փաստաթուղթ է: ԱՍՌՊ-ն հանդիսանալու է Աշտարակ համայնքում աղբահանության ոլորտի զարգացման հիմք հանդիսացող հիմնական փաստաթղթերից մեկը, որով կառաջնորդվենք առաջիկա չորս տարիների ընթացքում՝ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնելիս:

ԱՍՌՊ-ի մշակելիս ուշադրություն է դարձվել համայնքի տարածքում անցակցված հարցումները, աղբահանության և սանմաքրման վերաբերյալ կարիքի գնահատումը, նրա համապատասխանեցմանը օրենքին և մեթոդական ուղեցույցին:

Պլանի կազմման ընթացքում հիմնվել ենք համայնքի տարածքում աղբահանության և սանմաքրման առկա իրավիճակի, համայնքի աղբահանությանն առնչվող հիմնախնդիրների, աղբահանության ոլորտն ավելի լայն հնարավորություններով զինելու, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունների և տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ օգտագործելով աղբի թափոնների վերամշակման կամ վերաօգտագործման և այլնի) հնարավորությունների, համագործակցային և արդյունավետ կառավարում իրականացնելու վրա:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱՍՌՊ | Աղբահանության և սանիտարական մաքրման ռազմավարական պլան |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՈՒԹՀՍ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՊԼԱՆ | Աղբահանության կառավարման ռազմավարական պլան |
| ԲԲՇ | Բազմաբնակարան շենքեր |
| ԿԿԹ | Կոշտ կեցաղային թափոններ |
| ՆՈՒՀ | Նախադպրոցական ուսումնական հաստատություն |

# 2. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

## ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**Աղյուսակ 1**

| **Պլանի անվանում** | **Աղբահանության և սանտիրական մաքրման տեղական կառավարման պլան** |
|---|---|
| Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր | **Աշտարակ համայնք**<br>Աշտարակ, Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով բնակավայրերը |
| Պլանավորման ժամանակաշրջան | 2026-2029թթ. |
| Ներկայացվող Պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը | 2026թ հոկտեմբեր |
| Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն | **Իշխան Բարսեղյան,** Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետ |
| Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոս | barseghyan.i.e@gmail.com **, հեռ. +37493590195** |
| Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե | ashtarakmunicipality@gmail.com |

### ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշտարակ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում: Երևան մայրաքաղաքից 20 կմ հյուսիս-արևմուտք, Աշտարակը գտնվում է Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի կենտրոնում, Հայաստանի չափանիշներով ունի բարենպաստ կլիմա: Ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Համայնքով են անցնում՝ Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին տանող մայրուղիները:

Կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում Աշտարակ միավորված համայնքի կազմում են գտնվում (1 քաղաքային և 29 գյուղական բնակավայրեր), Աշտարակ, Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով բնակավայրերը, որի արդյունքում բնականաբար փոխվել են համայնքի մարտահրավերները:

Վերջին տարիներին Աշտարակ քաղաքում կատարված մեծածավալ աշխատանքները շարունակվում են արդեն խոշորացված համայնքի բոլոր վարչական շրջաններում: Մեր նպատակը պետք է լինի ապահովելու համայնքի բնականոն զարգացումը, այն դարձնել

առավել բարեկեցիկ, անվտանգ և ապահով համայնքի բնակիչների և յուրաքանչյուր այցելուի համար: Կատարվող աշխատանքները պետք է տեսանելի լինեն յուրաքանչյուր բնակավայրում, յուրաքանչյուր մարդու համար:

### Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Աշտարակ համայնքում աղբահանությունը իրականացվում է «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից, որն ունի համապատասխան տեխնիկական միջոցներ և մասնագիտացված անձնակազմ:

Աղբի հավաքումը իրականացվում է Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և 29 գյուղական բնակավայրերում տեղադրված տարբեր չափերի շուրջ՝ 300 աղբամաններից և աղբարկղերից:

Ընկերությունը աղբի հավաքման համար տվյալ պահին օգտագործում է առկա 29 տեխնիկական միջոցները՝ աղբահավաք մեքենաներ, ինքնաթափ մեքենաներ:

Ընկերության անձնակազմը բաղկացած է 95 հոգուց:

Տարեկան աշխատանքային օրերի և ժամերի թիվը՝ 310 օր/տարի, 8 ժամ/օր:

Աղբի օրական հավաքվող և տեղափոխվող քանակները -105 խմ:

Առկա է հստակ ժամանակացույց բնակավայրերի համար: Աղբի հավաքումը կատարվում է նաև ըստ աղբի կուտակման մասին տեղեկատվության:

Աղբը աղբամաններից բարձվում է աղբատար մեքենաների մեջ և անմիջապես տեղափոխվում է Սասունիկի աղբավայր:

Աղբի հավաքման ժամանակ տեղում իրականացվում է նաև  աղբամանների շրջակայքում թափված աղբը: Անհրաժեշտության դեպքում կատարվում է աղբամանների ախտահանում հատուկ փրփռային նյութերով՝ որպիսի չառաջանա արտահոսք:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի վերաբերյալ

| | | |
|---|---|---|
| 1 | Իրավաբանական անձի լրիվ անվանումը | «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ |
| 2 | Իրավաբանական անձի ղեկավարի անուն, ազգանունը | Տնօրեն՝ Էդգար Մելիքյան |
| 3 | Իրավաբանական անձի գտնվելու վայրը | ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ, Ն. Աշտարակցու հրապարակ 7 |
| 4 | Գործունեության վայրը | ՀՀ Արագածոտնի մարզ Աշտարակ համայնքի տարածք |
| 5 | Էլեկտրոնային փոստի հասցեն | **komunal2022@mail.ru** |

| | | |
|---|---|---|
| 6 | Հեռախոսի համարը | + 374 93 711153 |
| 7 | Հիմնական գործունեության տեսակը | Աղբահանություն՝ աղբի հավաքում և տեղափոխում (Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող կոշտ կենցաղային թափոնների աղբավայր, ծառայությունը մատուցվում է՝ «ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից) |
| 8 | Արդյունաբերական հրապարակների քանակը | **1**<br>/ավտոկայանատեղի/ |
| 9 | Արդյունաբերական հրապարակների տեղակայման վայրը | Ավտոկայանատեղի, Աշտարակ, Մուղնի թաղամաս |
| 10 | Աշխատողների թվաքանակը | **95** մարդ |
| 11 | Հիմնական արտադրամասեր | - |
| 12 | Օժանդակ ստորաբաժանումներ | Ավտոկայանատեղի |
| 13 | Աշխատանքի հիմնական արտադրական ցուցանիշները | Աղբի հավաքում տարեկան առավելագույնը **11003 տ** |
| 14 | Տեղեկություններ պոլիգոնների, թափոնակուտակիչների վերաբերյալ | Ձեռնարկությունը չունի պոլիգոններ, սակայն ունի թափոնների կուտակման համար նախատեսված աղբամաններ |

## Արտադրական գործընթացի համառոտ բնութագիրը

«Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկն իրականացնում է Աշտարակ համայնքում աղբահանության՝ աղբամաններից աղբը Սասունիկի աղբավայր տեղափոխելու աշխատանքներ, ինչի համար ունի 7 աղբատար մեքենա: Ունի «Էկո-Կենտրոն» ՍՊ ընկերության հետ կնքած աղբի և թափոնների՝ Սասունիկի աղբավայրում տեղադրման պայմանագիր: Ընկերությունն ունի նաև շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացած վտանգավոր թափոնների գործածության գործունեության Լիցենզիա՝ 001-24 և լիցենզիային կից փոխադրման՝ 001-24 ներդիր:

## SWOT վերլուծություն

Հաշվի առնելով աղբահանության ներկայիս իրավիճակը կատարվել է աղբահանության ներքին պոտենցիալի և արտաքին բարենպաստ ազդեցության, ինչպես նաև համայնքի թույլ կողմերի և համայնքից դուրս գտնվող բացասական ազդեցությունների վերլուծություն (SWOT վերլուծություն): Ամփոփ ներկայացվում է այդ վերլուծության արդյունքները, որոնք կատարվել են աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ:

Վերլուծությունը թույլ է տալիս ուրվագծել այն պայմանները, որոնք սպասվում են ապագայում՝ հաշվի առնելով արտաքին դրական և բացասական ազդեցությունները:

**Աղյուսակ 2. SWOT վերլուծություն**

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • Աղբահանության ծառայության առկայություն<br>• Աղբահանություն իրականացնելու գրաֆիկի առկայություն<br>• Աղբամանների առկայություն<br>• Աղբատար մեքենաների առկայություն<br>• Համայնքապետարանն ունի լուրջ փորձ և պոտենցիալ միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու համար<br>• Բնակչության կողմից վարձավճարների հավաքման բարձր մակարդակ<br>• Նոր մտածելակերպի և բարեփոխումների նկատմամբ դրական վերաբերմունք համայնքապետարանի և աղբահանության սպասարկող ձեռնարկության կողմից | • Համայնքն աշխատում է միջազգային կազմակերպությունների հետ՝ Միջազգային ծրագրերի մասնակցություն<br>• Միջհամայնքային համագործակցություն<br>• Համայնքը գիտակցում է իր դերը և պատասխանատվությունը համայնքային ծառայությունների որակի բարձրացման համար և ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները բնակիչների և ՏԻՄ-ի վարքագծի դրական փոփոխությունների համար:<br>• Աղբի տեսակավորման և վերամշակման հնարավորություն<br>• Բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում<br>• Սպասարկման որակի բարձրացում<br>• ՆՈՒՀ-երում աղբի, աղբահանության և սանիտարական մաքրման մասին կրթական ծրագրերի ներդնում՝ համայնքում մշակույթի ճիշտ ձևավորման և ճիշտ դաստիարակության նպատակով |
| **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ** | **ՎՏԱՆԳՆԵՐ** |
| • Բնակչությանը տեղեկացնելու մշտական և կանոնավոր միջոցների պակաս<br>• Համայնքի նեղ, միակողմանի փողոցները:<br>• Աղբի ամբողջական վերամշակման բացակայությունը<br>• Աղբահանության աշխատաշուկան գրավիչ չէ, ուստի վարձու աշխատողներ գտնելը բավականին դժվար է:<br>• Աղբը նախատեսված վայրերում թափելու մշակույթի բացակայությունը բնակչության շրջանում | • Ճանապարհների շահագործման սեզոնային դժվարություններ<br>• Աղբահանության շահագործման սեզոնային դժվարություններ, աղբի վերամշակման բացակայություն<br>• Աղբի խառը կուտակումը, որը թափվում է մեկ ընդհանուր աղբավայրում, ինչն էլ առաջացնում է լուրջ բնապահպանական խնդիրներ<br>• Աղբահանության վերաբերող ազգային օրենսդրական բարեփոխումների պակաս նորմերի, նորմատիվների բացակայություն |

## 2) ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ

Սույն ենթաբաժնում ներկայացվում են պլանավորմանը նախորդող բազմաշահառու կողմերի հետ մի շարք քննարկումների արդյունքներով Պլանավորման տարածքում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեսլականը և նպատակները՝ հետևյալ ուղղություններով.

| - **հիմնախնդիրների բացահայտում** | - **առաջնահերթությունների սահմանում** |
|---|---|
| *1.* Թափոնների արդյունավետ կառավարման ներկայիս համակարգի արդիականացում և տեսակավորման համակարգի ներդրման անհրաժեշտություն:<br>*2.* Աղբավայրի սահմանափակ հզորություն և սանիտարական պայմանների համապատասխանելիության անհրաժեշտություն<br>*3.* Բնապահպանական և առողջապահական խնդիրներ | 1. Գործող աղբավայրի սանտիրահիգենիկ չափորոշիչների ապահովում<br>2. Թափոնների տեսակավորման և փոխադրման համակարգի ներդրում<br>3. Թափոնների արդյունավետ կառավարման մեթոդների մշակում<br>4. Համայնքային կրթական ծրագրերի իրականացում |
| - **ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն** | - **տեսլականի և նպատակների ձևակերպում** |
| 1. Պետական և Տեղական իշխանությունների կողմից աջակցություն թափոնների կառավարման համակարգի ժամանակակից մեթոդներ ներդրմանը | Մշակել Աշտարակ համայնքում թափոնների կառավարման կայուն, արդյունավետ և էկոլոգիապես մաքուր համակարգ, որն ապահովում է բնակիչների առողջությունն ու բարեկեցությունը՝ պահպանելով բնական միջավայրը:<br>Նպատակները:<br>1. Բարձրացնել թափոնների հավաքման և հեռացման արդյունավետությունը.<br>2. Արդիականացնել և համապատասխանեցնել գործող աղբավայրը սանիտարահիգենիկ պայմաններին համապատասխան<br>3. Նպաստել թափոնների տարանջատմանը և վերամշակմանը. |

## 3) ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

### ա. Պլանավորման տարածքի նկարագրություն

**Աղյուսակ 2**

| | Ընդհանուր տարածք | Քաղաքային | Գյուղական | Արդյունաբերական | Գյուղատնտեսական | Կանաչ, անտառային |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| Տարածքը (հա) | 7,6 | 3,0 | 4,6 | + | + | + |
| Տարածքը տոկոսով ընդհանուրից (%) | 100 % | 39 | 61 | + | + | + |

### բ. Աշխարհագրական սահմաններ




### գ. Ժողովրդագրական տեղեկատվություն

**Աղյուսակ 3**

| Գրանցված բնակչություն (մարդ) | Տնտեսությունների թիվ | Բազմաբնակարան շենքերի թիվ | Բնակարանների թիվ | Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ |
|---|---|---|---|---|
| 82731 | 20683 | 175 | 4725 | 1541 |

Բնակչության թվաքանակը 2025թ. տարեսկզբի դրությամբ կազմում է՝ 82731 մարդ, այդ թվում՝ (33092 տղամարդ, 33920կին, 15719 երեխա): Ազգաբնակչության 98,3%-ը հայ են:

Բնակչության մասնաբաժինը ըստ համայնքի բնակավայրերի՝ քաղաքային 33%, գյուղական 67%: Թվով շուրջ՝ 20683 տնտեսություններ:

**Գծապատկեր 1. Համայնքի մշտական բնակչության սեռատարիքային կազմը՝**




**Գծապատկեր 1.2 Բնակչության մասնաբաժինը ըստ ՝ քաղաքային, գյուղական**




## դ. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

**Աղյուսակ 4**

| Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները | Քանակ | Նշումներ |
|---|---|---|
| **Բնակելի նպատակային նշանակության շինություններ** | **20683** | - |
| Բազմաբնակարան բնակելի շենքեր | 175 | Բնակարանների թիվ 4725 |
| Անհատական բնակելի տներ | 20573 | - |
| **Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ** | **1681** | - |

| | | |
|---|---|---|
| Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ | 1160 | - |
| Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ | 48 | - |
| Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ | 195 | - |
| Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ | 128 | - |
| Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ | 95 | - |
| Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն | 55 | - |

## 4) ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ա. Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են.**

- մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (11003 տոննա/տարեկան)
- մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (133/կգ/տարի)
- մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (0,4/կգ/օր)

**բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը**

- **Կոշտ կենցաղային թափոն**՝ աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանած թափոն,
- **Խոշոր եզրաչափի թափոն**՝ 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում,
- **Շինարարարական աղբ**՝ քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով առաջացող աղբ,
- **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն,**
- **Փաթեթավորման թափոն**՝ կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն,
- **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)**՝ չշահագործվող սարքավորում, որը սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,
- **Կենսաբանական թափոն**՝ կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ
- **Պարտեզային թափոն**՝ այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,

- **Անվադողեր**՝ մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր
- **Վտանգավոր թափոն**՝ (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն, հնարավոր ցանկը ներկայացված է հավելվածում:

Պլանավորման տարածքում ներկայացվում է թափոնների բաղադրությունը՝ տոկոսներով ըստ ընդհանուրի: Աղյուսակ 5-ի II-րդ բաժնի սյունակը լրացվում է՝ եթե իրականացվել է թափոնների բաղադրության մանրակրկիթ ուսումնասիրություն:

**Աղյուսակ 5**

| I Թափոնի տեսակը | % | II Թափոնի տեսակը՝ մանրակրկիթ բաղադրության ուսումնասիրության դեպքում | % |
|---|---|---|---|
| Օրգանական | 73 | Խոհանոցային | 44 |
| | | Այգիներից պուրակներից և այլ կանաչ տարածքներից | 29 |
| Թուղթ և ստվարաթուղթ | 5 | | - |
| Պլաստիկ | 10 | Պլաստիկ շշեր | 5 |
| | | պոլիեթիլենային փաթեթավորումներ | 3 |
| | | Պլաստիկ տարաներ | 2 |
| Ապակի | 5 | | - |
| Մետաղ | 5 | | - |
| Այլ թափոն | 2 | էլեկտրական | - |
| | | տեքստիլ | - |
| | | փայտ | - |
| | | վտանգավոր | - |
| | | Այլ | - |

## 5) ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 6**

| | **Թափոններ գործածության ձև** | **Նկարագրություն** |
|---|---|---|
| **I** | Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում | Աշտարակ համայնքում իրականացվում է թափոնների խառը հավաքում և հեռացում օպերատորի կողմից դեպի աղբավայր, ինչպես նաև թափոն առաջացնողի կողմից աղբի ինքնափոխադրում դեպի աղբավայր |
| **II** | Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում | - |
| **III** | Թափոնների վերաօգտագործում և վերակիրառում | - |
| **IV** | Թափոնների վերամշակում և օգտահանում | - |
| **V** | Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում / | - |
| **VI** | Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում | - |
| **VII** | Տեղադրում սանիտարական աղբավայրում | համայնքում թափոնների տեղադրումն իրականացվում է քաղաքաշինական, բնապահպանական սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրում |

## ա. Թափոնների քանակն ըստ հիմնական տեսակների և դրանց գործածության ձևերի

Աղյուսակ 7

### 7-րդ Աղյուսակ

| Թափոնի տեսակ | Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ | Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի | | Թափոնների գործածության ձևեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I | II | III | IV | V | VI | VII | Նշումներ |
| | | | Խառը հավաքում (% ընդհանուր քանակից) | Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից) | Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից) | Վերամշակում և/կամ օգտահանում (% ընդհանուր քանակից) | Վտանգավոր թափոնների չեզոքացում /վնասազերծում (% ընդհանուր քանակից) | Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից) | Տեղադրում սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից) | |
| Կ Կոշտ կենցաղային թափոն | 90 | 5874 | 65,1% | | | | | | | |
| Խ Խոշոր եզրաչափերի թափոն | 25 | 2068 | 22,9% | | | | | | | |
| Շ Շինարարական աղբ | 1,5 | 124 | 1,4% | | | | | | | |
| Շ Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն | 4,5 | 372 | 4,1% | | | | | | | |
| Ա Անվադողեր | 4 | 331 | 3,7% | | | | | | | |
| Փ Փաթեթավորում և փաթեթվածք | 3 | 248 | 2,8% | | | | | | | |
| Է Էլեկտրական և էլեկտրոնային թափոն | | | | | | | | | | |
| Կ Կենսաբանական թափոն | | | | | | | | | | |
| Վ Վտանգավոր թափոններ | | | | | | | | | | |
| **Ընդամենը** | **133** | **11003** | **100%** | | | | | | | |

### բ. Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն

➢ **Աղբահանություն և կոշտ կենցաղային թափոնների հավաքում**

Աշտարակ համայանքում աղբի հավաքումը կատարվում է՝

- փողոցներում և բակերում տեղակայված աղբամաններից
- բազմահարկ բնակելի շենքերի տեղակայված աղբամաններից
- բնակելի տներից և կազմակերպություններից գրաֆիկով կամ պատվերով ժամանող աղբատարների միջոցով
- ինքնափոխադրմամբ՝ թափոն գոյացնողը կազմակերպում է իր գոյացած թափոնի փոխադրումը :

**Աղյուսակ 8**

| Թափոնների հավաքման մեթոդ | Ծառայությունից օգտվող բնակչություն (%) | Տեսակավորված հավաքում (տոննա) | Տեսակավորված հավաքում (%) | Չտեսակավորված հավաքում (տոննա) | Չտեսակավորված հավաքում (%) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| Աղբամաններից | 65 | - | - | 7152 | 100 | - |
| Աղբախցերից | | - | - | | | - |
| Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից | 25 | - | - | 2751 | 100 | - |
| Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից | 2 | - | - | 220 | 100 | - |
| Ինքնափոխադրում | 8 | - | - | 880 | 100 | - |

➢ **Աղբահանություն իրականացնող օպերատորներ**

**Աղյուսակ 9**

| Օպերատորի անվանում | Սպասարկվող համայնքներ/ բնակավայրեր | Սպասարկվող տարածքի բնակչության թիվ | Օպերատորի աղբատար մեքենաների թիվը | Օպերատորի աղբատար մեքենաների տեսակն, տարողությունը (բաց/փակ թափքով, կոմպակտորով) | Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ..., շինարարական և այլն հավաքում | Օպերատորի աշխատանքի գնահատական (1-ից 5) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ | 1 քաղաքային և 29 գյուղական բնակավայրեր | 82731 | 33 | 6 – բաց թափքով<br>8-բազմաֆունկց իոնալ աղբահավաք | Հիմնականում խառը, մոտ 5% վերամշակվում է/թուղթ/ | 5 | - |

- **Աղբի տեղափոխման սխեմաներ**

**Աղյուսակ 10**

| Թափոնի տեսակ | Հեռավորություն մինչև աղբավայր, կմ | Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան, կմ | Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն, կմ | Հեռավորություն մինչև այլ գործածության կայանք /վերամշակման գործարան և այլն/ կմ | Նշում ինքնափոխ ադրման մասին |
|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | 15-55 | - | - | - | - |
| Խոշոր եզրաչափերի թափոն | 15-55 | - | - | - | - |
| Շինարարական աղբ | 15-55 | - | - | - | - |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն | 15-55 | - | - | - | - |
| Անվադողեր | 15-55 | - | - | - | - |
| Փաթեթավորում և փաթեթվածք | 15-55 | - | - | - | - |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն | - | - | - | - | - |

- **Վերօգտագործում և նախապատրաստում վերաօգտագործման կամ վերակիրառման համար**

**Աղյուսակ 11**

| Արտադրողի անվանում | Արտադրանքի տեսակ | Վերադարձվող բաղադրիչ (ապակե, պլաստիկե տարա, փաթեթավորում և այլն) | Վերադարձի/հավաքման մեխանիզմ (ընդունվում է գործարանում, խանութում, ընդունման կետերում) | Սպառողի համար վերադարձի հարմարություն (անհարմար, հարմար) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | - | - |
| - | - | - | - | - | - |
| - | - | - | - | - | - |

- **Վերանորոգման կարողություններ**

**Աղյուսակ 12**

| Արտադրանքի տեսակ | Վերանորոգման կետերի թիվ | Նշումներ |
|---|---|---|
| | | |
| Լվացքի մեքենա,սառնարան | **14** | - |
| Այլ կենցաղային տեխնիկա | **8** | - |
| Հագուստ կոշիկ | **11** | - |
| Կահույք | **12** | - |
| Տրանսպորտային Միջոցների/Մեքենաների Տեխնիկական Սպասարկում և Նորոգում | **74** | - |
| Շինարարություն /պատուհան, դուռ, տանիք և այլն/ | **18** | - |

## ➢ Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում

**Աղյուսակ 13**

| Տեսակավորվող թափոնի տեսակ | Հավաքվում է ընդունման կետում (այո/ոչ) | Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ) | Հավաքվում է սպասարկման օբյեկտներից (այո/ոչ) | Հավաքվում է աղբավայրերում (այո/ոչ) |
|---|---|---|---|---|
| Ապակի | | Ոչ | | Ոչ |
| Պլաստիկ | | Այո | | Այո |
| Մետաղ | | Այո | | Այո |
| Թուղթ | | Ոչ | | Ոչ |
| Ավտոմեքենայի մարտկոց | - | - | - | - |
| Այլ թափոններ /նշել/ | - | - | - | - |

## ➢ Թափոնների գործածության կայանքներ

**Աղյուսակ 14**

| Թափոնների գործածության կայանքներ | Առկայություն (պլանավորման տարածքում առկա է/առկա չէ, առկա է այլ տարածքում) | Հզորություն, հազ տ/տարի | Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| Տեսակավորման կենտրոն | Առկա չէ | - | - | - |
| Ապակու վերամշակման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Մետաղի վերամշակման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Պլաստիկի վերամշակման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Թղթի վերամշակման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Կոմպոստացման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Կենսագազի արտադրման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Աղբակիզման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Վնասազերծման/վերացման կայանք | Առկա չէ | - | - | - |
| Փոխաբեռնման կայան | Առկա չէ | - | - | - |
| Աղբավայր | Առկա է | 30,0 | 15-55 | - |
| Այլ /նշել/ | - | - | - | - |

- **Աղբավայրեր և աղբանոցներ**

**Աղյուսակ 15**

| Աղբավայր /գտնվելու վայրը/ | Շահագործող համայնքներ /բնակավայրեր | Աղբավայրի մակերես, հա | Տեղադրվող աղբի տեսակ | Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/ | Սեփականության /օգտագործման իրավունք | Շահագործողի անվանում | Աղբի տեղադրման վճարը /ՀՀ դրամ/տոննա | Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհահատվածի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող կոշտ կենցաղային թափոնների աղբավայր | Աշտարակ | 8 | Կոշտ, կենցաղային թափոններ | - | Մասնավոր | ծառայությունը մատուցվում է՝ «ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից | խմ շուրջ՝ 250 ՀՀ դրամ | Բավարար |
| Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող կոշտ կենցաղային թափոնների աղբավայր | Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով | 8 | Կոշտ, կենցաղային թափոններ | - | Մասնավոր | ծառայությունը մատուցվում է՝ «ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից | խմ շուրջ՝ 250 ՀՀ դրամ | Բավարար |

➢ **Պատասխանատվության փաստացի բաշխումը**

Պլանի նպատակային մշակման և արդյունավետ իրականացման համար կարևոր է հստակ սահմանել Պլանում այս կամ այն կերպ ներգրավված անձանց՝ շահակիրների, պատասխանատուների, իրականացնողների միջև պատասխանատվության շրջանակները: Պլանով նախատեսված տարբեր գործողություններ և թափոնների գործածության տարբեր փուլեր ենթադրում են տարբեր պատասխանատուներ և շահակիրներ:

**Աղյուսակ 16**

**16-րդ աղյուսակ**

| Պատասխանատուներ | Իրազեկության բարձրացում (%) | Խառը հավաքում (%) | Տեսակավորված հավաքում (%) | Տեղափոխում (%) | Տեսակավորում /գործարանային/ (%) | Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (%) | Վերամշակում և/կամ օգտահանում (%) | Վտանգավոր թափոնների վնասազերծում/ վերացում (%) | Տեղադրում աղբավայրում (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՏԻՄ | 50 | 100 | 20 | 80 | | | | | 100 |
| Մասնավոր հատված | | | 10 | 10 | | | | | 90 |
| Արտադրող | | | 10 | 10 | | | | | 100 |
| Բնակչություն | | | | | | | | | 90 |
| Քաղաքացիական կազմակերպություն | 50 | 40 | | | | | | | |

- **Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնների տեսակների գործածության**

**Աղյուսակ 17**

| Թափոնի տեսակ | Իրազեկության բարձրացում | Խառը հավաքում | Տեսակավորված հավաք | Տեղափոխում | Վերաօգտագործում /կրկնօգտագործում | Վերամշակում և/կամ օգտահանում | Տեղադրում աղբավայրում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | ՏԻՄ | ՏԻՄ | ԲՆ | ՏԻՄ | ԲՆ | ՔԿ | ՏԻՄ |
| Խոշոր եզրաչափերի թափոն | | | | | | | |
| Շինարարական աղբ | ՏԻՄ | ՏԻՄ | ԲՆ | ՏԻՄ | - | - | ՏԻՄ |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն | | | | | | | |
| Անվադողեր | | | | | | | |
| Փաթեթավորում և փաթեթվածք | | | | | | | |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն | | | | | | | |
| Կենսաբանական թափոն | | | | | | | |
| Վտանգավոր թափոններ | | | | | | | |

- **Անձնակազմի կարողությունների գնահատում**

**Աղյուսակ 18**

| Հմտություն/ ոլորտ | Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը | Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց) | Նշումներ |
|---|---|---|---|
| Թափոնների կառավարման գիտելիքներ | 8 | 3 | - |
| ՀՀ օրենսդրության իմացություն | 7 | 3 | - |
| Տվյալների հավաքագրում | 4 | 3 | - |
| Համակարգչային քարտեզագրում | 2 | 3 | - |
| Գնումների կազմակերպում | 4 | 4 | - |
| Պայմանագրերի կառավարում | 4 | 4 | - |
| Գործառնական հմտություններ | 4 | 4 | - |
| Ֆինանսական վերլուծության իմացություն | 4 | 4 | - |

➢ **Աղբահանության և Կոշտ թափոնների գործածության քարտեզ**

Ներկայումս իրականացվում են պլանավորման տարածքի քարտեզագրման աշխատանքներ, որից հետո այն կտեղադրվի ենթաբաժնում:

## 6) ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

**Աղյուսակ 19**

| Հարցեր | Իրազեկվածության/գոհունակության աստիճան /1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց/ | Նշումներ/ առաջարկություններ |
|---|---|---|
| **1. Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ** | | |
| Կրթության տարբեր աստիճաններ (նախադպրոցական, դպրոցական, բուհական) | 3 | - |
| Սոցիալական գովազդներ | - | - |
| Պաշտոնական տեղեկատվություն ԶԼՄ-ներով | - | - |
| Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն | 3 | - |
| **2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն** | | - |
| Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազեցությունները | 3 | - |
| Թափոնների թերի կառավարման սոցիալական ազեցությունները | 3 | - |
| Թափոնների թերի կառավարման տնտեսական ազդեցությունները | 2 | - |
| Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները | 3 | - |
| Թափոնների հիերարխիայի իմացություն | 4 | - |
| Օրենսդրության խրախուսող գործիքներ | - | - |
| Օրենսդրության պատժիչ գործիքներ | 2 | - |
| Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր | 4 | - |
| **3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ** | | - |
| Թափոնների կայուն կառավարման կարևորությունը | 4 | - |
| Թափոնների տեսակավորման օգուտները | 2 | - |
| Թափոնների վերօգտագործման օգուտները | 3 | - |

| | | |
|---|---|---|
| Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները | - | - |
| Իրազեկվածության արշավների օգուտները | 4 | - |
| **4. Բնակիչների և տնտեսվարողների գոհունակություն** | | - |
| Աղբամանների տեղակայվածություն | 4 | - |
| Աղբամանների վիճակ | 4 | - |
| Չտեսակավորված թափոնների հավաքման հաճախականություն | 4 | - |
| Տեսակավորված թափոնների հավաքում | 2 | - |
| Համայնքի սանիտարական վիճակ | 5 | - |
| Աղբահանության վճար | 200 ՀՀ դրամ քաղաքային և գյուղական բնակավայրերում | Քաղաքային և գյուղական բնակավայրերում աղբահանությունը իրականացվում է ամենօրյա գրաֆիկով |
| Մատուցված ծառայությունների ընդհանուր վիճակ | 5 | «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ |

## 7) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

### ա. Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն

**Աղյուսակ 20**

| Տարի | Փաստացի բնակչության թիվ | Աղբահանության սահմանված վարձավճարը, դրամ/անձ | Գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը | Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը /աղբահանության պայմանագիր / | Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի | Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ/տարի | Աղբավայրում աղբի տեղադրման ծախս, դրամ/տոննա |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2026 | 82731 | 200 ՀՀ դրամ քաղաքային և գյուղական բնակավայրերում | 20683 | (աղբահանության պայմանագիր 298) քմ շուրջ՝ 70 ՀՀ դրամ | 102 771 500 | 794 400 000 | խմ շուրջ՝ 250 ՀՀ դրամ |

բ. Հավաքագրում և ծախսեր

Աղյուսակ 21

| Տարի | Եռամսյակ | Աղբահանության եկամուտ/ հավաքագրում | | | | | | Եկամուտ վերամշակման ենթակա թափոնների վաճառքից | Աղբահանության ծախս | | Սանիտարական մաքրման ծախս | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բնակչություն | | | Տնտեսվարող սուբյեկտներ | | | | | | | |
| | | Պլան | Փաստ | % | Պլան | Փաստ | % | | Պլան | Փաստ | Պլան | Փաստ |
| 2026 | 1-ին եռ. | 15 500 000 | 13 500 000 | 87% | 9 841 578 | 4 132 000 | 42% | | 145 500 000 | 145 500 000 | 60 600 000 | 36 000 000 |
| | 2-րդ եռ. | 14 250 000 | 13 200 000 | 93% | 9 841 578 | 6 549 500 | 67% | | 138 900 000 | 138 900 000 | 60 000 000 | 48 000 000 |
| | 3-րդ եռ. | 21 500 000 | 20 300 000 | 94% | 9 841 578 | 6 980 000 | 71% | | 147 600 000 | 147 600 000 | 48 000 000 | 57 000 000 |
| | 4-րդ եռ. | 31 224 000 | 34 290 000 | 110% | 9 841 578 | 10 800 000 | 110% | | 165 000 000 | 165 000 000 | 56 400 000 | 56 400 000 |
| Տարեկան 2026թ. | | **82 474 000** | **81 290 000** | 99% | **29 524 734** | **21 481 500** | 73% | | **597 000 000** | **597 000 000** | **225 000 000** | **197 400 000** |
| 2027 | 1-ին եռ. | 18 000 000 | 15 000 000 | 83% | 12 000 000 | 4 500 000 | 38% | | 151 500 000 | 151 500 000 | 60 600 000 | 36 000 000 |
| | 2-րդ եռ. | 22 000 000 | 15 000 000 | 68% | 12 000 000 | 7 500 000 | 63% | | 153 900 000 | 153 900 000 | 60 000 000 | 48 000 000 |
| | 3-րդ եռ. | 25 000 000 | 22 000 000 | 88% | 12 000 000 | 7 500 000 | 63% | | 147 600 000 | 147 600 000 | 48 000 000 | 57 000 000 |
| | 4-րդ եռ. | 35 000 000 | 35 000 000 | 100% | 12 000 000 | 12 000 000 | 100% | | 165 000 000 | 165 000 000 | 56 400 000 | 56 400 000 |
| Տարեկան 2027թ. | | **100 000 000** | **87 000 000** | 87% | **48 000 000** | **31 500 000** | 66% | | **618 000 000** | **618 000 000** | **225 000 000** | **197 400 000** |
| 2028 | 1-ին եռ. | 25 000 000 | 19 000 000 | 76% | 12 500 000 | 6 000 000 | 48% | | 151 500 000 | 151 500 000 | 60 600 000 | 36 000 000 |
| | 2-րդ եռ. | 30 000 000 | 22 000 000 | 73% | 12 500 000 | 8 000 000 | 64% | | 210 900 000 | 153 900 000 | 60 000 000 | 48 000 000 |
| | 3-րդ եռ. | 30 000 000 | 25 000 000 | 83% | 12 500 000 | 9 000 000 | 72% | | 147 600 000 | 147 600 000 | 48 000 000 | 57 000 000 |
| | 4-րդ եռ. | 40 000 000 | 36 000 000 | 90% | 12 500 000 | 12 000 000 | 96% | | 165 000 000 | 165 000 000 | 56 400 000 | 56 400 000 |
| Տարեկան 2028թ. | | **125 000 000** | **102 000 000** | 82% | **50 000 000** | **35 000 000** | 70% | | **675 000 000** | **618 000 000** | **225 000 000** | **197 400 000** |

## գ. Թափոնների գործածության հասանելի տարբերակների արժեքներն ըստ տեսակների

**Աղյուսակ 22**

| Թափոնի տեսակ | Խառը հավաքում (դր/տ) | Տեսակավորված հավաքում (դր/տ) | Տեղափոխում (դր/տ) | Տեսակավորում /գործարանայ | Վաճառք որպես հումք (դր/տ) | Վերամշակում/օգտահանում (դր/տ) | Վնասազերծում (դր/տ) | Տեղադրում աղբավայրում (դր/տ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | - | - | - | - | - | - | - | - |
| Խոշոր եզրաչափերի թափոն | - | - | - | - | - | - | - | - |
| Շինարարական աղբ | - | - | - | - | - | - | - | - |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն | - | - | - | - | - | - | - | - |
| Անվադողեր | - | - | - | - | - | - | - | - |
| Փաթեթավորում և փաթեթվածք | - | - | - | - | - | - | - | - |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն | - | - | - | - | - | - | - | - |
| Կենսաբանական թափոն | - | - | - | - | - | - | - | - |
| Վտանգավոր թափոններ | - | - | - | - | - | - | - | - |

### դ. Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինքնարժեքը

Թափոնների կառավարման ինքնարժեքի հաշվարկը Պլանի պարտադիր բաղկացուցիչ մասն է: Այն հաշվարկվում է՝ 23-րդ աղյուսակը լրացնելով:

**Աղյուսակ 23**

